

"ՀՕՄ-ի ՕԴ"ուան Տոնակատարություն

«Մենք՝ ուխտեալներ Հայ Օգնութեան սուրբ գործին... Մենք՝ ուխտեալներ ՀՕՄ-ի պայծառ դրօշին...»

Իր ուխտին հաւատարիմ՝ Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի վարչութիւնը, 29 Յունուար 2017-ի յետ միջօրէի ժամը 4-ին, Հայ Երիտասարդական Կեդրոնի Համագգայինի թատերասրահէն ներս, մեծ շուքով եւ արժանավայել վեհութեամբ՝ նշեց ՀՕՄ-ի ՕԴը եւ մասնաճիւղի հիմնադրութեան 54-րդ տարեդարձը:

Հանդիսութեան ներկայ էին Հայ Առաքելական Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ՝ Հոգեշնորհ Տէր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէքեան, Հ.Յ.Դ. “Սողոմոն Թէփլիրեան” Կոմիտէի հերթապահ՝ Ընկ. Յակոբ Ճանպազեան, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Ընկ. Վարսենիկ Սարգիսեան, ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ՝ Ընկ. Նաթալի Մանուկեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ, զանազան կազմակերպութիւն-ներու եւ միութիւններու ներկայացուցիչներ, բազմաթիւ համակիրներ եւ ՀՕՄուհիներ:

Օրուան պատգամաբերն էր ՀՕՄ-ի բազմավաստակ ընկի. Աննա Պուլկարեան, յատկապէս հրաւիրուած Մոնթրէալէն:



Առ ի գնահատանք Հայաստան համահայկական հիմնադրամի Թորոնթոյի կազմին, ինչպէս նաեւ իր հայրենանուէր ճիգերուն ի նպաստ հայապահ-պահման, Հայաստանի եւ Արցախի զարգացման նուիրական աշխատանքին, պատուոյ գնահատագրի արժանացաւ՝ Տիար Մկրտիչ Մկրտիչեան:

Առ ի գնահատանք իրենց նուիրումին եւ անսակարկ ծառայութեան ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիւղին եւ անոր միջոցով Թորոնթոյի գաղութին եւ Հայ ժողովուրդին՝ պատուոյ գնահատագրի արժանացան՝ ընկերուհիներ Լորա Մավլեան եւ Շաքէ Ստեփանեան: Գնահատագրերը յանձնեց Ընկհ. Իռէն Թիլիմեան:



Օրուան պատգամաբերն էր ՀՕՄ-ի բազմավաստակ ընկհ. Աննա Պուլկարեան որուն Բանախօսութեան աւարտին որպէս յուշանուէր ընկհ. Աննա-ին յանձնուեցաւ Տոբթ. Զապէլ Գաբրիէլեան-Churchill-ի հեղինակութեամբ՝ «Sisters Of Mercy» գիրքը:



Առ ի գնահատանք, Հայ Օգնության Միության 15, 25, 35 եւ 60 տարիներու անդամակցութեան եւ յարատեւ նուիրումին, պատուոյ զարդասեղներու արժանացան շարք մը ՀՕՄ-ուհիներ:



ՀՕՄ-ի Ռուբինա Մասնաճիւղը գեղեցիկ աւանդութեամբ՝ 1997-էն ի վեր հաստատած է «Տարուան Երիտասարդ Կամաւոր» ի մրցանակը: Այս տարի սոյն մրցանակին արժանացաւ՝ Տարօն Տէրտէրեան, իր ազգանուէր եւ նուիրեալ կամաւոր ծառայութեան համար:



«Ռուբինա» մասնաճիւղի համալսարանական կրթաթոշակ մրցանակին արժանացան՝

Օրդ. Անի Սահակեան



Օրդ. Գառնի Կարապետեան



Պրն. Կայծակ Կարեն Գասապեան



Դրո Նաճարեան կրթաթոշակին արժանացաւ՝ Օրդ Քարլի Սահակեան



Կնքամայրություն՝ Ընկի. Գեղուկի Պասթաճեանի՝ նորագիր անդամուհիներ կատարեցին իրենց ուխտը, մուտք գործելով ՀՕՄ-ի նուիրական յարկէն ներս, միանալով ՀՕՄ-ի առաքեալներու հսկայ փաղանգին, թրծուելու ՀՕՄ-ի հնոցին մէջ:



Հանդիսութեան աւարտին մոմավառութեան արարողութիւնը կատարեց երեք ընկերուհի՝ Զուարթ Ծատուրեան, փոխանցելով ջահը կրտսեր սերունդի նորագրեալ ընկերուհի՝ Կասիա Մուրատեանին:

